

սպորտը ժամերգութեանց ընթացքին: Վերջապէս իրմով կը հեռանայ քաղցր ու խաղաղասէր Պատրիարքն ու Հայրը Ս. Աթոռին, որ իր ամբողջ կեանքի ընթացքին, մինչև գազաթիւ իր ասպարէզին, իր հեռանդ ու ցաւի օրերուն ալ ընդմէջէն, միշտ մնաց այն Հայրը որուն մտքին ու հոգիին բովանդակ գործարանաւորութիւնը մնաց կշռոյթին ներքեւ իր սրտին, որուն ջերմութեանը տակ զինք սխալ հասկցողներն անգամ կը լուէին:

Ու այս ամէնը ազնիւ դրուագումով մը պառկած դազադին մէջ, աւելի գեղեցկացան ու փնտռուիլ սկսան երբ թաղման թափօրը կը տանէր զանոնք իր հետ, հոգեւոր այս Տունէն պարպելով այդ բոլորը, անգարդ և անշուք ձգելով իր հոգեծին զաւակները բոլոր, որոնք տակաւին պէտք ունէին իրենցմէ բաժնուող այդ գարդեբուն: Այդ պէտքին զգացումը տակաւ աւելի իրաւ կը դառնայ, երբ յանկարծ կը նշմարուի, հոն, անոր տեղւոյն վրայ իսկ գոյացած մեծ պարապութիւնը:

Իր զաւակները, բոլորն ալ, պինդ շըրջապատած, շիջող արժէքներով լեցուն աւնոր դազադը, իրաւ յուզումով մը կոտորտը բայլերով, կ'առաջնորդեն զայն իր յաւիտեանական հանգիստը, և ամենաշերմ գուրգուրանքով մը կը հանգչեցնեն զայն հողին մէջ, Դժուար եղաւ ակամայ այդ յանձնումը: Կ'ըսեն թէ վճռական պահեր կան, որոնց առջև մարդիկ մեծ տատամսումներ, աւելին՝ մեծ դարձեր կ'ունենան: Ձափազանցած չեմ ըլլար երբ ըսեմ թէ հոգիի իր զաւակները, բոլորը, վճռական այդ պահերէն մէկը ապրեցան, երբ իրաւ՝ անդարձ կերպով յանձնել ստիպուեցան պատուական Հայրը այս Ս. Տան, հողին:

* * *

Հանգիստ Գու ռուսներուդ ու ցաւատանջ մարմնիդ. խաղաղութիւն ու լոյս հոգիիդ. մահուամբ ու թաղումովդ ալ մեծացած ու գեղեցկացած Հայր սիրելի:

ԳՐԻԳՈՐ ԱՅՆՂԱՅ

ՅԱՐԳԱՆՔԻ ԽՕՍ Ք

«Հոգւոյ հանգուցելոյ, Քրիստոս Աստուծո՛ւ, արա՛ւ հանգիստ եւ դորմութիւն».

Ուխտի ելած էի Երուսաղէմ. ուխտի և համբոյրի Սրբազան այն վայրերուն, որոնք, էր երբեմն, քաղցրօրէն օրօրած էին պատանեկութիւնս և աշնուականօրէն ներշնչած սիրտս ու կերտած հոգիս, և որոնց կը վերադառնալի, վերապրելու համար աւելի ներգործ իրենց քաղցրութիւնը, սրբութիւնն ու օծութիւնը:

Ուխտի և համբոյրի ելած Երուսաղէմ՝ այցի եկած էի նաև Անոր՝ որ մին եղած էր հովանաւորողներէն թարմութիւնը տարեքիս, ծաղկումը մատաղատի հասակիս և բարոյական աճումը կեանքիս և հոգիիս: Այո՛, այցի եկած էի հոգեւոր ծնողիս ու բարեկամ Հայրապետիս, տալու համար իր խռովակոծ հոգւոյն կաղցրօր հարազատիս սփոփանքին՝ և ստանալու համար ալ թերեւս վերջին օրհնութիւնները իր հայրական, երբ չար բախտը առջէն դրաւ զիս իր դազադին ու գերեզմանին... և դուք, սիրելի՛ եղբայրներ ի Քրիստոս, տեսաք թէ՛ ո՛րպիսի խոր յուզումով զրկեցի և համբուրեցի թէ՛ մին և թէ՛ միւսը և ողորցցի զանոնք արեւունքներովը տաք ու յորդառատ, բիւր քափոտ սակայն, անշուք և ունայն...:

Ու... այսօր, հրաւերովը Ս. Աթոռոյ մշտաբխուն Լուսարարապետ Հօր, հանդերձեալ եմ Պատարագելու և ազօթելու հանգստեանը համար հոգւոյն, Ձեր և իմ սիրելի ողբացեալ Պատրիարքին:

Պատարագելու և ազօթելու ըսի, հանգստեանը համար Հոգւոյն: Ո՛րք է բայց իր Հոգին, և ի՞նչպէս կարելի է հանգիստ տալ Անոր...:

Քրիստոնէական մեր հաւատքին ուսուցումով մենք գիտենք, սիրելի՛ք, թէ՛ զոյգ է կայանը անմահութեան՝ ի Տէր ննջած մեր սիրելւոյն հոգիին: Ան նախ հո՛ն է՝ ուրկէ, օր մը, թախէք առած եկած է հոս բարի կամօքն Աստուծոյ, և կատարել է յետոյ ընթացքն իր երկրաւոր կեանքին, նոյն կամօքն Աստուծոյ, վերադարձած է այժմ

տեղն իր նախկին, ծոցը կ'ըսեմ երկնաւոր իր չօր: Հո՛ս է նաև Ան, հոս, մեր մէջ. իր երկրաւոր կեանքը օթեանոց վայրերուն՝ և իր սէրերուն, իր յիշատակներուն, իր ձեռքերուն, իր նպատակներուն, իր անունին ու ոգիին վառարան՝ մեր սիրտերուն և հոգիներուն մէջ: Այո՛, եղբայրներ ի Գրիստոս, ողբացեալ մեր Սրբազան Հայրապետին հոգին կը գտնուի վերը՝ երկնաւոր, և վարը՝ երկրաւոր անմահութեանց զոյգ կայաններուն մէջ. բայց, կը հարցնեմ դարձեալ՝ ի՞նչպէս կարելի է Հանգիստը Անոր հոն և հոս . . . :

Հո՛ն, ի վերին երուսաղէմ, այդ Հանգիստը կարելի է և ապահով: ո՛չ միայն արդիւնքներով իր բարի և աստուածահաճոյ կեանքին և արդիւնքովը նաև մեր մատուցած Պատարագին և աղօթքին, այլ մանաւանդ անբաւ ողորմութեամբ և անըսուած գթութեամբ, ո՛րքան Արդար՝ յոյնքան և ներող երկնաւոր իր չօր: Իսկ հոս, ի վարին երուսաղէմ, այդ Հանգիստը կարելի է, սիրելիք, ո՛չ թէ ի պաշտօնէ մատուցած մեր աղօթքով, այլ՝ իր գերեզմանին շուրջ մեր պահած սգաբոյր և երկիւղած լուութեամբ, իր անձին հանդէպ զգացուած՝ որդիական ջերմ սիրով, իր անունին և յիշատակին հանդէպ տածուած՝ երախտալիլ յարգանքով, իր թերի կամ կիսակատար թողած պարտականութեանց լրումին համար՝ մեր խանդավառ նուիրումով, իր կատարած գործերուն հանդէպ՝ աննախապաշար և աննախանձ մեր գնահատումով: այդ հանգիստը, հո՛ս կարելի է կ'ըսեմ՝ մանաւանդ իր մահով մեզ փրկանքը և ազգային ու կրօնական սրբազան ժառանգութեանց հանդէպ՝ մեր երկիւղած պաշտամունքով, և զանոնք անապարտ պահելու, զանոնք փայլուն ու բարգաւաճ ընծայելու և վերջապէս՝ զանոնք վերածնունտ մեր Ազգին ու Հայրենիքին և վերականգնելի Ս. Էջմիածնայ և Ս. Յակոբեանց զոյգ Աթոռներուն փառքին ու պատուոյն, օգտին ու բարւոյն, բարձրացման ու պայծառացման ի սպաս զենլու՝ մեր բարի կամքով և բարեբար ջանքերով:

Եւ աւելին, սիրելի եղբայրներ: Ողբացեալ մեր Սրբազան չօր հոգւոյն մեր մէջ ու մեզմով ունենալիք սոյն հանգիստն

ու խաղաղութիւնը կարելի է կը սկսի ու կ'ապահովուի՝ խաղաղութեամբը հոյնիմեմ մեր հոգիներուն: Ուստի, աղօթելէ և պաշտելէ առաջ Աստուծոյ՝ հանգստեանը համար իր հոգւոյն անդենականի իր կայքին մէջ, ջանալք նախ մեծք օալ իրեց այդ խաղաղութիւնը, հոս, մեր մէջ, խաղաղութեամբ մեր հոգիներուն ու կեանքներուն, խաղաղութիւն՝ որ իր բոլորովին ակն ու աւագանը կրնայ ունենալ անկեղծօրէն հաւատաւոր մեր հոգիներուն՝ և պարկեշտօրէն սիրող մեր սիրտերուն մէջ միայն. հաւատացող կ'ըսեմ՝ Աստուծոյ և իր Փրկիչ-Որդւոյն, հաւատացող՝ Ս. Աւետարանին և Ս. Քաջին և հաւատացող՝ անոնցմով պատգամուած և ապրուած, մեզմով ալ քարոզուած և նախ մեզմով ապրելի կեանքին՝ ճշմարտութեան, բարութեան և գեղեցկութեան, և սիրող միանգամայն մեր Արարիչը՝ յանձին մեր ընկերոջ եւ եղբոր:

Հաւատալ և սիրել, սիրել՝ և ապրիլ մանաւանդ փոխադարձ բարութեամբ, ապրել՝ համբարշիլ գործակցութեամբ, ապրել՝ բարի և պարկեշտ վարքով, ապրել՝ խաղաղ և ներդաշնակ կեանքով, այս չէ՞ միթէ մեր կոչումն ու պարտականութիւնը սիրոյ և խաղաղութեան այս Ս. Քաղաքին մէջ, ո՛վ հաւատքի, սիրոյ և խաղաղութեան պաշտօնեայ և քարոյիչ իմ եղբայրներ, այս՝ որպէսզի անթերի կատարւումին անոնց, իրենց հանգիստն ու խաղաղութիւնը գըտնեն ո՛չ միայն մեր ննջեցեալները՝ այլ և ապրող հոգիներն ու կեանքերը բոլոր անոնց, որոնք հոս, մակաղած մեր չուքին տակ, և հոն, աւելի հեռուները, հոգիներն լարած և աչքերնին յառած՝ կարօտով կը սպասեն Յիսուսական խաղաղութեան սըրբազան մեր շունչին, շունչ՝ առանց որուն ունայն և խարուսիկ է այն միւս խաղաղութիւնը, որուն համար մարդիկ այսօր զիրար կը ջարդեն . . . :

Օ՛ն ուրեմն, եղբայրներ, եկէ՛ք, բուրովինք որդիական թրթուռն սիրով շուրջն իր յիշատակին և տոգորուած անկեղծաւոր հաւատքով, համակուած իրարու հանդէպ սուրբ սիրով, համբարշիւած իրարու հետ եղբայրական համբոյրով՝ լեցուինք խաղաղութեան սրբազան շունչով, և թո՛ղ մեր

հոգիներուն և կենսքերուն սիրաբուր այգ խաղաղութեան մէջ թաղուած՝ իրենց հանգիստը ու երանութիւնը օրօրին, մեռած թէ ապրող մեր բոլոր հայրերը, եղբայրներն ու քոյրերը, և յաւիտենական իր հանգիստն ու երանութիւնը օրօրէ՛ մանաւանդ ողբացեալ մեր Սրբազան Հայրապետը, և

այս՝ յուրախութիւն երկնի և երկրի, ի շինութիւն Ազգի և Հայրենիքի, ի պայծառութիւն վանուց և եկեղեցւոյ, ի փառաւորութիւն մանաւանդ մեր Ս. Աթոռոյն, և ի փառս Ս. Երրորդութեան. Ամէն:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔԶՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՀԻՆ ԶԱՆԳԱԿ

ՎԱՆՔԻ ՏՐՏՈՒՄ ՕՐԵՐՈՒՆ

Մայրավանքի հին զանգակ, կսոր կսոր կը փրթիւս...
Խորունկ՝ բեկումն է, իջնող՝ ծանր ու մութ, հոգիս.
Ձայնըդ թայնա՛ն է հեռու, անհրաւէր, վիհաւոր,
Նըլաղուն կանչ մը ինչպէս օրերուն դէմ մեր հասնող...

Մայրավանքի զանգա՛կ հին, հոգիս մէջ ինչ փառքեր
Դուն երգեցիր. ինչ հրնուա՛նք, հրպարսութիւնն իմ ցեղին...
Հոն, ժողովուրդ մը լըման՝ ծնծղայ-ծնծղայ, կը հընչէ՛ր,
Կամարներով, ջահերով, հասակներով արփային...:

Հիմա, գիտե՛ս, հի՛ն զանգակ՝ անարձագանգ հրաւէր,
Ձայնէդ ամէն մէկ կաթիլ՝ սրտութիւններ փակելէն
Մօտիկ, հեռու անցեալիդ բաւիղներուն ընդմէջէն,
Կսոր կսոր կը փրթի՛, հոգիներուն պէս աւեր...:

Ըսէ՛, ըսէ՛, դարձընէ՛ս պիտի նորէն ինծի դուն,
Հին փաղցրութիւնն իմ արտին..., կարօս այնքա՛ն որ ունի:
Ու մանաւանդ դարձընէ՛ս պիտի հրպարս իմ հոգւոյն,
Ինչ որ երէկն էր՝ շրթնէ՛ր, յաւերժագէտ, կորովի...:

Մայրավանքի զանգա՛կ հին, գիտնա՛ս ինչպէ՛ս կը կոսսայ
Սիրքս՝ ձայնիդ դէմ, հիմա...:

10 Օգոստոս 1944

Թ. Ա. Մ.